ՀՏԴ 331.522

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Զ. Զ. Մանվելյան

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Համառոտ ներկայացված են գործազրկության առաջացման հիմնական պատճառները և սոցիալական անվտանգության հիմնախնդիրները: Ուսումնասիրվել են ոլորտին վերաբերող վիճակագրական տվյալները և առկա իրավիճակը ՀՀ-ում: Առաջարկվում են սոցիալական անվտանգության մշակման անհրաժեշտ ուղիներ, որոնք կարող են արտահայտված լինել ակտիվ պետական միջոցառումների կիրառման դեպքում և հանգեցնեն գործազրկության մակարդակի կրճատմանը:

Առանցքային բառեր. *գործազրկություն, շուկա, պետություն, սոցիալական անվտանգություն, բնակչություն:*

Ցանկացած երկրի տնտեսական կայունության համար գնահատական տալու առաջնային և կարևորագույն ցուցանիշներից է տվյալ երկրի գործազրկության մակարդակի գնահատումը: Գործազրկության դեպքում աշխատուժի առաջարկը գերազանցում է դրա նկատմամբ եղած պահանջարկը՝ առաջացնելով աշխատուժի լճացում տնտեսության տվյալ ոլորտում: Գործազրկության մակարդակը կարևոր ցուցանիշ է տնտեսության սոցիալական ուղղվածության համար: Ինչքան բարձր է գործազրկության մակարդակը, այնքան անմխիթար վիճակում է հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը և այնքան խորացված են հասարակության մեջ բացասական խնդիրները: Ինչպես նշում է Մ.Խ.Բրենները [1]՝ գործազրկության մակարդակի 1%-ի ավելացումը նպաստում է մահացության 2%-ի, գողությունների՝ 2,8%-ի, սպանությունների՝ 3,8%-ի, ինքնասպանությունների՝ 4%-ի, հոգեբուժական հաստատություններ դիմողների թվի 3,4%-ի բարձրացմանը:

Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) տվյալների համաձայն ամբողջ աշխարհում գործազուրկների թիվը հասել է մոտ 180 *մլն* մարդու (նկ. 1): Վերջին տարիների ընթացքում տնտեսական ճգնաժամի պայմաններում առանց աշխատանքի են մնացել մոտ 20 *մլն* մարդ, նաև կտրուկ ավելացել է «աշխատող աղքատների» քանակը, որոնց կարգավիճակը քիչ է տարբերվում գործազուրկից: Մեր ժամանակներում մոտ 550 *մլն* աշխատող վաստակում է աշխատանքային օրվա ընթացքում 1 $-ից պակաս գումար [2]:

Արդեն շուրջ երկու տասնամյակ է Հայաստանի Հանրապետության հասարակական կյանքի բոլոր բնագավառներում տեղի են ունենում արմատական փոփոխություններ, որոնց շնորհիվ ազատ շուկայական տնտեսությանն անցման գործընթացները դառնում են անշրջելի:



Նկ. 1. Գործազրկության մակարդակն ըստ ԱՄԿ-ի և ՀՀ վիճակագրության տեղեկատուների [3]

Ինչպես անցումային ժամանակաշրջան ապրող բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում այդ փոփոխություններն անխուսափելիորեն ուղեկցվում են բարդ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների առաջացմամբ, որոնց թվում ամենակարևորներից մեկը գործազրկության աճն է՝ ինչպես բացահայտ, այնպես էլ «քողարկված» դրսևորումներով: Գործազրկության հաղթահարման համար ժամանակակից պայմաններում պահանջվում են նոր տնտեսամեթոդաբանական մոտեցումներ, որոնք շուկայական տնտեսության կայացման ներկայիս փուլում ունակ կլինեն նպաստել մակրոտնտեսական այդ կարևորագույն խնդրի լուծմանը [4]:

Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի գործազուրկ են համարվում այն՝ տասնվեց տարեկանը լրացած, աշխատանք փնտրող, աշխատունակ, չզբաղված անձինք, ովքեր չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ, ունեն առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, աշխատանքի տեղավորման նպատակով դիմել են զբաղվածության պետական ծառայությանը և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Գործազրկության առաջացման պատճառները տարբեր են.

1) տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխություններ, որոնք պայմանավորված են նոր տեխնոլոգիական ներդրումներով և հանգեցնում են աշխատուժի կրճատմանը,
2) տնտեսության անկումը, որն ստիպում է գործատուին կրճատել պահանջարկի մակարդակը յուրաքանչյուր պաշարի նկատմամբ, այդ թվում նաև՝ աշխատուժի,
3) պետական քաղաքականությունը աշխատանքի վարձակալության վերաբերյալ, մասնավորապես՝ նվազագույն աշխատավարձի բարձրացումը նպաստում է աշխատուժի նկատմամբ պահանջարկի կրճատմանը,
4) տնտեսության առանձին ճյուղերում սեզոնային փոփոխությունները,

5) բնակչության կազմում ժողովրդագրական փոփոխությունները, մասնավորապես՝ բնակչության աշխատունակ զանգվածի ավելացումը, որն սպառնում է գործազրկության մակարդակի ավելացմամբ:

Տնտեսագետները գործազրկությունը բաժանում են երեք խմբի՝ հպանցիկ կամ ֆրիկցիոն, կառուցվածքային, ցիկլային կամ պարբերաշրջանային: Վարչահրամայական տնտեսակարգի շուկայական տնտեսվարմանն անցած երկրներում (այդ թվում նաև ՀՀ-ում) գործազրկությունը ստացել է նոր դրսևորումներ, որոնցից կարելի է առանձնացնել «քողարկված» գործազրկությունը, որի հիմնական ձևն է հարկադիր վարչական արձակուրդում գտնվելը: ՀՀ-ում «քողարկված» գործազրկությունը ձեռք է բերել նոր գծեր, որոնք չեն համապատասխանում դրա դասական նկարագրին՝ որպես արտադրության ծավալների կտրուկ անկման և տնտեսությունում զբաղվածների թվի զանգվածային կրճատման հետևանք: Այսօր էլ տնտեսագետները միակարծիք չեն դրա բովանդակության շուրջ: Ոմանք «քողարկված» գործազրկության ներքո հասկանում են ավելցուկային զբաղվածության իրավիճակ: Մյուսները «քողարկված» գործազրկությունը նույնացնում են ոչ լրիվ զբաղվածության հետ: Մեր կարծիքով «քողարկված գործազրկություն» երևույթը միջանկյալ վիճակ է զբաղվածության և գործազրկության միջև: Այն ոչ լրիվ զբաղվածություն է, ոչ էլ բացահայտ գործազրկություն, բայց մյուս կողմից այն և՛ գործազրկություն է, և՛ զբաղվածություն՝ միաժամանակ:

2008-2010թթ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից կատարված ընտրանքային հետազոտությունները վկայում են, որ գործազուրկների մեծ մասը չի գրանցվում զբաղվածության ծառայություններում, այլ նախընտրում է աշխատանք ստանալ ծանոթների և բարեկամների միջոցով և դուրս մնալ հաշվառումից: 2011թ. մայիսի 1-ի դրությամբ հանրապետությունում պաշտոնական տվյալներով գործազրկության մակարդակը կազմել է բնակչության 6,3 % կամ 75,5 հազ. մարդ, որոնցից 52 հազ. կանայք են (նկ.2) [5]:



Նկ. 2. Գործազրկության մակարդակը ՀՀ-ում 2002-2011թթ.

Աշխատանքի շուկան կամ բնակչության զբաղվածությունը կարգավորելիս պետությունն իրականացնում է երկու տեսակի քաղաքականություն՝ պասիվ և ակտիվ: Պասիվի ժամանակ պետությունն իրականացնում է հիմնականում գործազրկության բացասական հետևանքների վերացման միջոցառումներ՝ գործազրկության գրանցումը և հաշվառումը, նպաստի վճարումը՝ առկա ազատ աշխատողների գրանցմամբ և առաջարկմամբ: Ակտիվ քաղաքականության ժամանակ պետությունը փորձում է զբաղվածության մակարդակի վրա ազդել անհրաժեշտ նախապայմաններ ստեղծելու ճանապարհով՝ նոր աշխատատեղերի ավելացմամբ, ինչպես նաև աշխատուժի որակավորվածության մակարդակի բարձրացման հաշվին: Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վերջին տարիներին պետության կողմից իրականացվող միջոցառումները հիմնականում վերաբերվում են պասիվ շարքին, իսկ ակտիվ պետական միջոցառումներն առանձնապես տարածված չեն մեր հանրապետությունում:

Զբաղվածության պետական կարգավորման արտասահմանյան փորձի աստիճանաբար զարգացումը ցույց է տալիս, որ տնտեսապես զարգացած երկրների կառավարությունների ջանքերն ուղղված են աշխատուժի առաջարկի և պահանջարկի մակարդակների մոտեցմանը: Ընդհանրացնելով աշխատաշուկայի պետական կարգավորման հնարավորություններն՝ արտասահմանյան փորձը Հայաստանի պայմաններին հարմարեցնելու տեսանկյունից՝ այսօր ՀՀ-ի աշխատաշուկայում առաջին պլան է մղվում ակտիվ քաղաքականությունը, որի հիմնական բաղկացուցիչներն են՝ աշխատողների և գործազուրկների վերապատրաստումը և արտադրության ընդլայնման խթանումը [6] :

ՀՀ-ում ակտիվ աշխատաշուկայի քաղաքականության արդյունավետությունը, մեր կարծիքով, պայմանավորված է հետևյալ միջոցառումների իրականացմամբ.

-անցում պասիվ քաղաքականությունից դեպի ակտիվ քաղաքականության,

-աշխատաշուկայի ապակենտրոնացված քաղաքականության ուժեղացում,

-նպատակային խմբերի կողմնորոշում:

ՀՀ-ում, նկատի ունենալով մարզերի առանձնահատկությունները, արդյունավետ կլինի, եթե որոշումների ընդունումը կայացվի մարզային մակարդակով, որովհետև տեղական ինքնակառավարման մարմինները, այդ թվում նաև զբաղվածության տարածքային կենտրոններն առավել քան լավատեղյակ են տեղական՝ տնտեսական պայմաններին և աշխատաշուկայի պահանջներին: Նման մոտեցումը հիմնավորվում է նաև նրանով, որ մարզերը տարբերվում են իրենց սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական ներուժով, տնտեսության կառուցվածքով և սոցիալական խնդիրների գերակայությամբ:

Անցումային ժամանակաշրջանի տվյալ փուլում ՀՀ տնտեսության համար կարևորագույն խնդիր է տնտեսական զարգացման կայուն և բարձր տեմպերի ապահովումը, որը հնարավորություն կտա վերականգնել և ընդլայնել երկրի տնտեսական ներուժը: Այս տեսանկյունից, տնտեսական զարգացման գործընթացի վրա անմիջականորեն ազդող գործոններից է աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը [7]:

Փաստորեն, գործազուրկների սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունը պետք է ենթադրի դրա իրազեկում երկու հիմնական ուղղություններով. օգնություն՝ գործազուրկների կենսական պահանջմունքների բավարար մակարդակ

ապահովելու նպատակով, և խթանում՝ ակտիվ աշխատանք փնտրելու համար: Այս առումով, մեր կարծիքով, կարևոր նշանակություն պետք է տրվի գործազուրկների սոցիալ-տնտեսական պաշտպանության համակարգի կատարելագործմանը:

Հաշվի առնելով, որ աշխատանքի շուկայում ցածր մրցունակության սկզբունքի հիման վրա միավորված բնակչության ներկայացուցիչները բացի ընդհանուր հատկանիշներից ունեն նաև մի շարք յուրահատկություններ, աշխատանքի շուկայում սոցիալական պաշտպանության քաղաքականությունը պետք է կառուցվի՝ չանտեսելով այդ յուրահատկություններն ու նրանց առանձնահատուկ պահանջմունքները:

Ցավոք, գործազրկության կրճատման պարզ ուղի գոյություն չունի: Կառավարությունն ի վիճակի չէ անել այնպես, որ աշխատավարձը մոտենա հավասարակշռված ու ցանկալի մակարդակին: Կատարված վերլուծությունների հիման վրա կարելի է կատարել առաջարկություններ, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ գործազրկության մակարդակի կրճատմանը ուղղված միջոցառումների համալրմանը: Գործազրկության մակարդակի վրա էական ազդեցություն են թողնում սոցիալական անվտանգության հետևյալ գործոնները՝ գործազրկության նպաստները, նվազագույն աշխատավարձը, նաև դրանց բաշխման միջոցները: Սոցիալական անվտանգության մակարդակի որոշման համար անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները.

1. Սոցիալական անվտանգության մակարդակը պետք է լինի համաչափ: Մասնավորապես, յուրաքանչյուր իրավիճակի դեպքում աշխատավարձը միշտ պետք է ունենա խթանիչ դեր աշխատանքի նկատմամբ: Ելնելով այս սկզբունքից՝ գործազրկության նպաստի չափը պետք է լինի այնքան, որ մարդը գիտակցված չգերադասի չաշխատելը:
2. Սոցիալական օգնությունը պետք է տարանջատել ըստ բնակչության տարբեր խմբերի: Պետությունը պարտադիր պետք է հոգ տանի այն մարդկանց մասին, ովքեր իրենց կամքին հակառակ ազատվել են աշխատանքից:
3. Սոցիալական անվտանգության և պաշտպանվածության կարիք ունեն բազմազավակ մայրերը, մանկահասակ երեխաներ խնամող և միայնակ մայրերը, թոշակառուները և այլոք: Հատուկ ուշադրության կենտրոնում պետք է լինեն այն քաղաքացիները, որոնք ունեն դժվարություններ՝ կապված աշխատանքի տեղավորման խնդիրների հետ: Այս դեպքում առաջարկվում է զբաղվածության կենտրոններում կիրառել նոր մասնագիտական մոտեցումներ՝ որակավորման աստիճանի բարձրացման և հատուկ ծրագրերի կիրառման գործընթացների ապահովման շուրջ:

Պետությունը, զարգացնելով ակտիվ միջոցառումների քաղաքականության սկզբունքները, կարող է առաջին հերթին կրճատել աշխատանք փնտրելու ժամանակը: Դրական ազդեցություն կարող է ունենալ պետության աջակցությունը նոր տեխնոլոգիական համակարգերի իրագործման վրա, որը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը: Փոքր և միջին բիզնեսի հարկային բեռի թեթևացնելը նույնպես կնպաստի աշխատունակ բնակչությանն աշխատանքով ապահովելը և կկանխի արտագաղթը:

З.З. Манвелян

БЕЗРАБОТИЦА КАК ПРОБЛЕМА СОЦИАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

Кратко представлены основные причины возникновения безработицы и проблемы социальной безопасности. Изучены статистические данные о безработных и существующая ситуация в РА. Предлагаются необходимые пути разработки социальной безопасности, которые могут быть применены при проведении активных государственных мероприятий и которые помогут снизить уровень безработицы.

Ключевые слова: *безработица, рынок, государство, социальная безопасность, население.*

Z.Z. Manvelyan

UNEMPLOYMENT AS A SOCIAL SECURITY ISSUE

The root causes of unemployment and social security issues are briefly presented. Statistics on unemployment and the current situation in Armenia are studied. We suggest appropriate methods to develop the social security, which can be applied and reduce unemployment if State measures are held.

Keywords: *unemployment, market, state, social security, population.*

Գրականություն

1. **Բրեններ Մ. Խ.** Հետևանքներն երևույթից դաժան. - ԱՄՆ, 2003. - էջ 20-38:
2. **«ԱՄԿ» վիճակագրական** տարեկան հաշվետվությունների տեղեկագրեր: 2011թ. – URL: www.gosbook.ru.
3. **International** Labour Organization. – URL: www.ilo.org.
4. **Նիկոյան Վ.** Զբաղվածության քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում. - 2002. - N 13, 14 (95, 96), հուլիս. - էջ 23-25:
5. **ՀՀ Ազգային** վիճակագրական ծառայության ինտերնետային կայք. - URL: www.armstat.am:
6. **Նիկոյան Վ.** Աշխատանքի շուկայի վիճակագրական վերլուծությունը ՀՀ-ում. - Երևան, 2009:
7. **Խոջաբեկյան Վ.Ե.** Զբաղվածության խնդիրները Հայաստանում անցման շրջանում/ ՀՀԳԱԱ. - Երևան: «Գիտություն» հրատարակչություն, 1998. - էջ 66:

Մանվելյան Զառա Զաուրի., տ.գ.թ. *(ՀՀ, ք. Երևան)- ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն, ասիստենտ, (093)368026:*

Манвелян Зара Зауровна, к.т.н. *(РА, г.Ереван) – НУАСА, кафедра Экономики, права и управления, ассистент, (093)368026.*

Manvelyan Zara Zaur, doctor of philosophy (Ph.D) in engineering *(Yerevan, RA) – NUACA, assistant professor Chair of Economy, Law and Management, (093)368026.*

Ներկայացվել է՝18. 04.2013թ.
Ընդունվել է տպագրության՝15.04.2013թ.